# ՀՀ ԳԱԱ ինստիտուտների կողմից 2012թ. կազմակերպվող գիտական միջոցառումների ցանկ

- **2012թ.-ի ապրիլին** Երևանում ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը կկազմակերպի միջազգային գիտաժողով՝ նվիրված Զմյուռնիայի կոտորածների 90-րդ տարելիցին

- **2012թ.-ի ապրիլի 2-ին,** 10:00, ՀՀ ԳԱԱ նախագահության կլոր դահլիճում կկայանա Շվեցարիայի գիտական հիմնադրամի կողմից ֆինանսավորված ARPEGEO նախագծի շրջանակներում կազմակերպված "Շրջակա միջավայրի տվյալների փոխանակում. միջազգային չափանիշների ընդունում ի նպաստ Հայաստանի գիտական համայնքի" աշխատանքային գիտաժողովը

- **2012թ.-ի ապրիլի 18-19-ին** տեղի կունենա ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողով (Տարեկան Ընդհանուր Ժողովի Ծրագիր)

- **2012թ.-ի ապրիլի 19-ին** ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Աշոտ Մելքոնյանը հանդես կգա գիտական զեկուցմամբ՝ “Ակադեմիկոս **Հովսեփ Օրբելու** ներդրումը արևելագիտության և հայագիտության զարգացման ասպարեզում”

- **2012թ.-ի հունիսի 5-6-ը** ՀՀ ԳԱԱ-ն և ԵՊՀ-ն նախատեսում է միջազգային գիտաժողով՝ "Հայկազուններ. առասպել և պատմություն" թեմայով, որը տեղի կունենա Երևանում՝ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում

- **2012թ.-ի հունիսի 21-ին** ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը կազմակերպում է գիտաժողով՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյա հոբելյանին, որը տեղի կունենա ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում

- 2012թ.-ի հունիսի 24-ից հուլիսի 1-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանը, ՀՀ մշակույթի նախարարության "Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն" ՊՈԱԿ-ը և Արցախի պետական համալսարանը կազմակերպում են միջազգային գիտաժողով՝ "Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը" խորագրով: Միջազգային գիտաժողովի մասին համապարփակ տեղեկատվություն կարելի է ստանալ armheritage.sci.am կայքից:

- **2012թ.-ի սեպտեմբերի 2-9-ը** ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը Երևանում կազմակերպում է "Ստոխաստիկ և անալիտիկ մեթոդներ մաթեմատիկական

ֆիզիկայում" թեմայով 8-րդ միջազգային գիտաժողովը

- **2012թ.-ի սեպտեմբերի 7-12-ը** ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը և ԵՊՀ-ն Երևանում կազմակերպում են "Ստոխաստիկ և PDE մեթոդները ֆինանսական մաթեմատիկայում" թեմայով միջազգային գիտաժողովը

- **2012թ.-ի սեպտեմբերի 9-16-ը** ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը և ՌԳԱ Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտն անց են կացնում Ռուս-հայկական չորրորդ խորհրդակցությունը՝ նվիրված մաթեմատիկական ֆիզիկայի, կոմպլեքս անալիզի և հարակից հարցերին: Մանրամասներին կարելի է ծանոթանալ http://math.sci.am/ կայքում:

- **2012թ.-ի սեպտեմբերի 14-ին** Երևանում ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը կկազմակերպի միջազգային գիտաժողով՝ նվիրված Զմյուռնիայի կոտորածների 90-րդ տարելիցին

- **2012թ.-ի սեպտեմբերի 14-17-ը** Խարկովում (Ուկրաինա) տեղի կունենա "10th EAST-WEST DESIGN & TEST (EWDTS 2012)" սիմպոզիումը

- **2012թ.-ի սեպտեմբերի 15-23-ը** ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը Բյուրականում կազմակերպում է Երիտասարդ աստղագետների միջազգային 4-րդ դպրոց

- **2012թ.-ի սեպտեմբերի 25-29-ը** ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը Բյուրականում կազմակերպում է "Աստղագիտական ժառանգություն և հասարակություն" Ա. Շիրակացու 1400-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը

- **2012թ.-ի սեպտեմբերի 26-29-ը** ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային Կենսաբանության Ինստիտուտը և Մոլեկուլային և բջջային կենսաբանության և իմունաբանության հայկական ասոցիացիան (ՀՀ, Երևան) կազմակերպում են երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողով “Մոլեկուլային և բջջային կենսաբանության զարգացման հեռանկարներ-3” թեմայով

- **2012թ.-ի հոկտեմբերի 2-4-ը** ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային և բջջային կենսաբանության ինստիտուտը և Մոլեկուլաբջջային կենսաբանության և իմունաբանության հայկական ասոցիացիան անց են կանցնում դասախոսությունների շարք երիտասարդ գիտաշխատողների համար (սկսած բակալավրի աստիճանից) “Տեր-մանրէ փոխազդեցությունների մոլեկուլային և բջջային հիմունքներ: ինֆլամասոմը որպես թիրախ” թեմայով

- **2012թ.-ի հոկտեմբերի 5-ին** Երևանում ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը Հայաստանի գրողների միության հետ համատեղ կկազմակերպի միջազգային գիտաժողով՝ "Ազգային կերպարը և ազգային գրականության ինքնատիպությունը" թեմայով
- **2012թ.-ի հոկտեմբերի 8-9-ը** (Երեւան) Եվրոպական կենսաքիմիական միությունների ֆեդերացիան (FEBS) կազմակերպում է դասընթաց Կենսաքիմիայի եւ մոլեկուլային կենսաբանության կրթության (ուսանողների եւ երիտասարդ գիտնականների կողմից գիտական հմտությունների ձեռքբերման) վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ http://aab.sci.am

- **2012 թ.-ի հոկտեմբերի 8-12-ը** Ծաղկաձորում ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտը, ՀՀ Տեսական մեխանիկայի ազգային կոմիտեն, ՌԴ Տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեն, ՌԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտը կազմակերպում են "Հոծ միջավայրի մեխանիկայի արդի պրոբլեմներ" թեմայով երրորդ միջազգային գիտաժողովը՝ նվիրված ակադեմիկոս Ն. Խ. Հարությունյանի 100-ամյակին

- **2012թ.-ի հոկտեմբերի 9-12-ը** ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ Քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքը և ՀՀ Գիտության պետական կոմիտեն կազմակերպում են “Քիմիական ֆիզիկայի արդի խնդիրները” միջազգային գիտաժողով, նվիրված ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի 50-ամյակին: Այդ գիտաժողովի շրջանակներում տեղի կունենա նաև ակադ. Ն.Մ. Էմանուելի անվ. “Օքսիդացում, օքսիդային սթրես և հակաօքսիդիչներ” երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովը և դպրոցը

- **2012թ.-ի հոկտեմբերի 9-12-ը** ՀՀ ԳԱԱ ՖԱ բաժանմունքը և ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը Աշտարակում կազմակերպում են "Լազերային ֆիզիկա-2012" միջազգային կոնֆերանսը